ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՇՈՒՇԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԻՆՉՊԵՏ ԴԻՏԱՐԿԵԼ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Յեղասպանության ասպվածաբանությունը ներառում է ասպվածաբանական հայեցակետերի մի խումբ, որոնց շնորհիվ փորձ է արվում բացատրել մարդկության պատմության ամենաաղետալի երեւույթներից մեկի պատճառներն ու հետեւանքները:

Ստորեւ կիտսենք Քանանի հեթանոս ազգերի կոտորածի ասպվածաբանական մեկնաբանությունների, Հոլոքոստի ասպվածաբանության մասին, ինչպես նաեւ կփորձենք ընդհանուր գծերով ներկայացնել Մեծ Եղեռնի ասպվածաբանական ընկալումը՝ վերը նշված ասպվածաբանական կոնցեպցիաներն ի սպաս դնելով, ինչպես նաեւ հաշվի առնելով արդեն առկա մեկնությունները: Հայոց յեղասպանությունը գրեթե չուսումնասիրված ոլորտ է ասպվածաբանական գիտության կողմից, որի հետեւանքով ավելի է մեծանում այս դիտակետից ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Վերջին տասնամյակներում առանձնահատուկ ուշադրության է արժանանում հինկտակարանյան պատմության ուրույն մի դրվագ՝ Քանանի երկրի գրավումը եւ քանանացիների՝ արդեն իսկ բազում ասպվածաբանների կողմից «յեղասպանություն» եզրով որակված ոչնչացումը: Խնդիր առաջացնողն այստեղ այն է, որ Հին կտակարանի համապատասխան հատվածներում Ասպված ինքն է կոչ անում, հրամայում կոտորել բոլոր ազգերին (Բ. Օր. Ի. 16), որոնք ապրում էին այն երկրում, որը Ասպված ուխտ էր արել տալ Աբրահամին (Ծնն. ԺԵ. 18, Ելք Գ. 8): Հեսուի գրքում (Զ.-Ժ.) նկարագրվում են հրեաների կատարած 7 քաղաքի բնակչության զանգվածային սպանությունները. Հեսուն, ըստ հինկտակարանյան պատումի, ոչնչացնում է այն ամենը, ինչ շնչում էր (Հեսու Ժ. 40): Ինչպե՞ս է այս ամենը հաշտվում նորկտակարանյան Աստծո կերպարի հետ, ինչպե՞ս է Քրիստոսի միջոցով հայտնված Ասպված, որ Սեր է կոչվում, հրամայում կոտորել նրանց, ում Ինքն էր ստեղծել: Ստորեւ հարկ ենք համարում անդրադառնալ առավել հայտնի ասպվածաբանների՝ այս ոլորտում կատարած աշխատանքներին, որոնք աչքի են ընկնում իրենց բազմակարծությամբ ու հետեւություններ անելու առիթ են տալիս:

Քանանացիների կոտորածը երկրագործների ու անասնապահների դասակարգային պայքարի հետեւանք է համարում ամերիկյան յեղասպանագետ Բեն Կիերնանը: Նա

հասնում է ընդհուպ մինչեւ Կայենի ու Աբելի ժամանակներն ու աշխատանքի ընկերային բաժանումը համարում նաեւ Քանանի հայրենի ճակատագրի նախապայմանը: Զուտ աստվածաբանական խնդիրներ հեղինակը չի շոշափում, բայց նրա գործը հետաքրքիր զուգահեռներ է գտնում առաջին մարդասպանության հետ. նա ի սկզբանե միմյանց ներհակ է համարում անասնապահներին ու երկրագործներին. «Օրենքի թիրախներից էին ամորհացիները, որոնց շումերները կոչում էին «անասնապահ ժողովուրդ», որոնք «չէին աճեցնում սերմ»: Հիմնականում քաղաքաբնակ Քանանի երկրում հրեաների հայրենվելը իր հետ բերեց երկրագործական սանդղակավորում եւ նստակեցություն»[1]: Հրեաները եւ քոչվոր էին, եւ անասնապահ, ուստի նրանց համար անընկալելի էր երկրագործի նստակյաց կենսակերպը, հետեւաբար նաեւ՝ նրանց երկրագործական պաշտամունքը, հողի ֆետիշացման հետ կապված ծիսական արարողություններն ու մտածելակերպը, եւ որ ամենագլխավորներից է, հողին կառչած լինելու մոլուցքը: Այդ հողը քանանացիները երբեք չէին կիսելու այլ կացութաձեւով զբաղվողների հետ, ինչպիսիք հրեաներն էին: Իսկ եթե պատահեր այնպես, որ նրանք կարողանային հրեաներին ամբողջովին ներգրավել իրենց ապրելակերպի մեջ, ապա հրեաները պետք է որ մինչ այդ արդեն մոռացած լինեին իրենց Միակ Աստծուն:

Առանց խորամուխ լինելու կրոնապատմական պատճառների մեջ՝ Բ. Կիերնանը զարմանքով մատնանշում է մի հասպարուն պատմական փաստ. թե՛ հնագույն ժամանակներում, թե՛ միջնադարյան Եւրոպայում հողագործ-կուլտիվատորների նկատմամբ ձեւավորվել էր ընդգծված բացասական վերաբերմունք, նրանց համարում էին մոգությամբ հաց վաստակողներ եւ մայր-հողի վրանգավոր ու հիմնականում դեմոնոլոգիական պաշտամունք կատարողներ: «Հողագործությամբ զբաղվելը հարաբերականորեն գաղափարական հոչակ գտավ միայն ժամանակակից շրջանում»[2], - գրում է Բ. Կիերնանը: Ներածության մեջ նա հակիրճ սահմանում է բոլոր ժամանակներում ցեղասպանությունների ընդհանուր պատճառը՝ որպես Աբելի ու Կայենի, հողագործի ու անասնապահի, քաղաքաբնակի ու գյուղաբնակի հարատեւ հակամարտություն: Ըստ հեղինակի՝ «Ժամանակակից ցեղասպանությունների գաղափարական գլխավոր գծերը ծագում են մի կողմից կրոնական կամ ռասայական ատելության հետ տարածքային էքսպանսիայի միախառնումից եւ մյուս կողմից՝ անտիկ պաշտամունքի ու հողագործության համախմբումից»[3]:

Քանանի իսրայելյան նվաճումն սկսում է հետեւյալ հատվածից. «Երբ քո Տեր Աստվածը քեզ տանի այն երկիրը, ուր պիտի մտնես այն ժառանգելու համար, եւ քո առջեւից հալածի մեծ ու բազմաթիվ ազգերին՝ քետացիներին, գերգեսացիներին, ամորհացիներին, քանանացիներին, փերեզացիներին, խեւացիներին ու հեբուսացիներին՝ քեզանից մեծ ու հզոր յոթ ազգերին, եւ քո Տեր Աստվածը նրանց մատնի քո ձեռքը, կհարվածե՛ս, կոչնչացնե՛ս նրանց: Նրանց հետ ուխտ չդնե՛ս եւ նրանց չխնայե՛ս: Նրանց հետ խնամություն

1 **B. Kiernan**, *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur*, Yale University Press, 2007, p. 2.

2 Անդ, էջ 3:

3 Անդ, էջ 4:

չհասպարտե՛ս. քո աղջկան նրա որդուն չտա՛ս, նրա աղջկան քո որդու համար կին չառնե՛ս, որովհետև քո որդուն իմ դեմ կապստամբեցնեն. նա օտար աստվածներ կպաշտի, եւ Տերը սաստիկ կբարկանա ձեզ վրա ու անմիջապես կկոտորի ձեզ: Այսպես կվարվեք նրանց հետ. քարուքանդ կանեք նրանց բագինները, ջարդուփշո՛ւր կանեք նրանց արձանները, կկոտորե՛ք նրանց անտառները, կրակի՛ կմատնեք նրանց կուռքերը» (Բ. Օր. Է. 1-2): Որպեսզի կասկած չունենան ոչնչացման հրամանի առնչությամբ, Մովսեսը հետագայում նույնը կրկնում է ու պատճառաբանում. «...որպեսզի սրանք ձեզ չսովորեցնեն անել իրենց այն բոլոր գարշելի բաները, որ նրանք անում են իրենց չաստվածների համար: Դրանով դուք մեղանչած կլինեք ձեր Տեր Աստծու առջեւ» (Բ. Օր. Ի. 16): Թե՛ առաջին, թե՛ երկրորդ հատվածներում ազգերի կոտորման պատճառաբանությունը մեկն է. եթե նրանք կենդանի մնային, Իսրայելին դարձնելու էին իրենց կրոնին: Այլ պատճառ, քան կրոնականը եւ բարոյականը չէր կարող լինել, եւ ոչ էլ Իսրայելն էր սուրը, որ Աստված որոշեր քանանացիներին նրա ձեռքը հանձնել, այլ, ինչպես երեւում է Բ. Օր. Թ. 4-ից, «Երբ քո Տեր Աստվածը քո առջեւ սպանի նրանց, քո մտքում մի ասա, թե՝ «Իմ արդար լինելու համար է, որ Տերը ինձ բերել է այստեղ, որպեսզի ժառանգեմ այս երկիրը: Ոչ թե քո արդար լինելու, այլ այդ ազգերի ամբարիշտ լինելու համար է, որ քո Տեր Աստվածը կոտորում է նրանց քո աչքի առջեւ: Ոչ թե քո արդար լինելու եւ քո հոգու մաքուր լինելու համար ես մտնում նրանց երկիրը..., այլ այդ ազգերի անօրենության համար է քո Տեր Աստվածը վերացնում նրանց քո առջեւից...»:

Քանանացիները կատարում էին մարդկային զոհաբերություններ, եւ հատուկ հարգանքի էին արժանանում նրանք, որոնք մասնակցում էին պաշտամունքային՝ «սրբազան պոռնկության» ծեսերին: Սրանց ու մի շարք այլ սարսափելի մեղքերի պատճառով հողն անգամ այլեւս չէր դիմանում իր բնակիչներին (հմմտ. Ղեւտ. ԺԸ. 19-25): Քանանացիների միջավայրում զոհաբերվում էին հիմականում մինչեւ 6 ամսական երեխաները, ընդ որում կիրառվում էին զոհաբերության ամենաբազմազան ձեւեր, ընդհուպ մինչեւ՝ ողջակիզում: Դա ավելի հաճախ լինում էր պատերազմի ժամանակ պարտվելու սպառնալիքի դեպքում: Որպես ապացույց հանդես են գալիս երեխաների գերեզմանները՝ բացված հնագիտական պեղումներով, իսկ, օրինակ՝ Կառնակում՝ Ամոնի տաճարի որմնապատկերներից մեկում, ներկայացված է քանանական քաղաք Աշկելոնի գրավումը՝ Ռամզես Բ.-ի (Ք. ծ. ա. ԺԳ. դ. 2-րդ կես) զորքերի կողմից: Պաշարվածների մեջ երկու մարդ քաղաքի պարսպի վրա զոհ են մատուցում. նրանք երեխաներին կախված են պահում ձեռքերից, որպեսզի նրանց զցեն թշնամու նետերի տարափին ընդառաջ ու դրանով որոշեն անելանելի վիճակից իրենց փրկությունը: Հաճախ արեւմտյան աստվածաբանների մեջ լինում են այնպիսիք, որոնք ընթերցելով ուգարիտյան արձանագրությունները՝ ոչ մի զոհաբերություն հիշեցնող երեւույթի մասին վկայություն չեն գտնում: Ուեսլի Մորրիստոնը գրում է. «Ժամանակակից հետազոտողներն ու թարգմանությունները ցույց են տալիս, որ քանանացիների կրոնում ոչ մի պիղծ կամ դաժան բան չկար, եթե, իհարկե, կենդանական զոհաբերությունները չեք դիտում դաժան... Նաեւ գտնում ենք կենդանական զոհաբերությունների նկարագրություններ, որոնք հիշեցնում են իսրայելացիների

զոհաբերությունները: Այն, ինչ ուգարիտյան տեքստերը չեն պարունակում, երեխաների զոհաբերությունն է»[4]: Մինչդեռ Հին Կտակարանում եւս առկա է Մորբիստոնի խոսքերի հակառակն ապացուցող մի սարափազդու դրվագ: Բ. Թագ. Գ. 26-27-ում խոսվում է այն մասին, որ երբ մովաբացիների արքան տեսնում է, որ իր զորքը տանուլ է տալիս մարտը, իր անդրանիկ որդուն է զոհաբերում եւ հաղթում իսրայելացիներին, քանի որ վերջիններս, տեղեկանալով այն մասին, որ թագավորը զոհ է մատուցել իր որդուն (հավանաբար զոհն ընծայվում էր քանանական Քեմոշ աստծուն), սարսափահար փախչում են[5]: Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ մարտի ընթացքը փոխվեց ավելի շուտ հրեաների նահանջի պատճառով, քննենք այս դրվագի մեկ այլ կողմը: Հատվածից երեւում է, որ ոչ միայն մովաբացիները, այլեւ հրեաներն էին հավատում, որ ծայրահեղ ծանր վիճակում անդրանիկ որդու, եւ այն էլ գահաժառանգի զոհաբերությունը, կարող է շրջել իրավիճակը. սա դիտվում էր որպես մոգական, տիեզերքում փոփոխություն առաջ բերելու ունակ երեւույթ[6]:

Քանանացիների մնացած հանցանքները սեռական բնույթի էին: Paul Copan-ը[7], չնայած նշում է, որ սա Հին Կտակարանում ուղղակիորեն չի վկայվում, բայց եբրայերեն Հին Կտակարանում հաղիպող qedeshot բառի տակ համեմատական ու տեքստաբանական քննությամբ վեր է հանում քանանացի տղամարդկանց ու կանանց ծիսական անառակության մասին ակնարկներ: Հանրահայտ է, որ Աստված պատժում է սեռական հանցանքների համար, երբեմն նույնիսկ զանգվածային ոչնչացման դատապարտում: Հողի պաշտամունք իրականացնող ազգերի մեջ սեռական այսպիսի արարողությունները լայն տարածում ունեին եւ նույնիսկ խրախուսվում էին: Որպես ապացույց կարող ենք դիտել նաեւ այն, որ Ղեւտ. ԺԸ. 3-ում Աստված նախազգուշացնում է. «Մի՛ արեք այն, ինչ արեցիք եգիպտացիների երկրում, որտեղ պանդուխտ էիք: Մի՛ արեք այն, ինչ արեցիք նաեւ քանանացիների երկրում, ուր ձեզ տանելու եմ, եւ նրանց օրենքներով մի՛ առաջնորդվեք», որից անմիջապես հետո խոսքը սեռական արգելքների մասին է եւ վերջում հավելում է. «Այս ամեն տեսակ անմաքուր արարքներով մի՛ պղծվեք, որովհետեւ նման արարքներով պղծված ժողովուրդներին ես ձեր առջեւից պիտի վանեմ: Նրանց պատճառով երկիրը զարշելի դարձավ, ես վեր հանեցի նրա անօրենությունները» (Ղեւտ. ԺԸ. 24-25): Աստված բոլոր դեպքերում է պատժում նման կարգի հանցանքներ գործող-

4 Տե՛ս http://www.epsociety.org/store/backissues.asp?issue=23&mode=detail, **W. Morriston,** *Did God Command Genocide (A Challenge to the Biblical Inerrantist)*, http://www.colorado.edu/philosophy/wes/DidGodCommandGenocide.pdf

5 Տե՛ս նաեւ Դատ. ԺԱ., Հեփթայեի դստեր զոհաբերությունը:

6 Տե՛ս **Վ. Ֆ. Օլբրայթ.** «Մենք դեռեւս չենք կարող ասել, որ հարավ-արեւմուտքի սեմական ազգերը ավելի անառակաբարո էին, քան եգիպտացիները, միջագետքցիները եւ խեթերը, բայց միանշանակորեն ճիշտ է, որ մարդկային զոհաբերությունները քանանացիների ու նրանց արյունակից ազգերի մեջ ավելի երկար տեւեցին, քան Եգիպտոսում կամ Միջագետքում: Նույնը կարելի է ասել նաեւ ծիսական պոռնկության մասին, քանի որ եւ Եգիպտոսում, եւ Միջագետքում շատ ավելի վաղ շրջանում որոշակի արգելքներ էին սահմանվել այս ոլորտում»: Մեջբերումն ըստ **A. Woods,** *Canaanite Genocide*, http://www.spiritandtruth.org/teaching/documents/articles/27/27.pdf:

7 Տե՛ս **W. Morriston,** *Did God Command Genocide (A Challenge to the Biblical Inerrantist)*, ttp://www.colorado.edu/philosophy/wes/DidGodCommandGenocide.pdf:

ներին, այդ թվում նաեւ այն իսրայելացիներին, որոնք հեւրագայում քանանացիների կրոնն էին ընդունում:

Ուեսլի Մորրիսրոնը կարծում է, որ եթե անգամ քանանացիները վերը նշված բոլոր պղծաբարո գործողություններն իսկապես կատարում էին, դեռեւս չի նշանակում, որ Ամենակարող Աստված ոչինչ չէր կարող անել՝ նրանց եւ բերելու իրենց չար ուղուց: Ըստ Մորրիսրոնի՝ Հին Կդրակարանում ոչ մի տեղ չի խոսվում փրկության որեւէ հնարավորության մասին, երբ հրեաները դեռ Եգիպտոսում էին. «Արդյո՞ք Աստված մի «Հովնանի» չուղարկեց քանանացիներին քարոզելու համար: Արդյո՞ք նրանք չուզեցին լսել նրան: Բայց ոչ մի նման բան չի գրված: Միայն մի տպավորություն է ստացվում. հեղինակները այս ազգերի մասին շատ քիչ բան գիտեին, եւ ուրեմն՝ չգիտեին, թե Աստված ինչ էր արել նրանց համար ու նրանց հետ»[8]: Ավելին, երբ Աստված Աբրահամի հետ ուխտ կապեց, խոստացավ, որ նրա չորրորդ սերունդը պիտի վերադառնա Եգիպտոսից Քանան. նրանք այնտեղ պետք է մնային, քանի դեռ քանանացիների մեղքերն իրենց լրումին չէին հասել (Ծն. ԺԵ. 16): Այս տեղին շատ գայթակղիչ է այն ուսումնասիրողների համար, ովքեր զբաղվում են թեոդիցեայի խնդիրներով, սակայն ոչ մի կերպ չեն կարողանում թեոդիցեա տեսնել քանանացիների ոչնչացման պարագայում՝ վերջին նշված հատվածից եզրակացնելով, թե Աստված սպասեց, որ քանանացիներն այնքան թաղվեն իրենց մեղքերի մեջ, որ մոտավորապես 430 տարի հետո իսրայելացիները զան ու կոտորեն մեղքերի մեջ սուզված ազգերին: Սակայն նմանատիպ ոչ մի համարից չի կարելի եզրակացնել, թե Աստված սպասում էր, որ նրանք որքան հնարավոր է ավելի մեղսավոր դառնային, որպեսզի կոտորածն օրինական համարվեր. պարզապես քանանացիների ընթացքը օրինաչափորեն հանգեցրեց ծայրահեղ բարոյական ճգնաժամի, որի նախընթացը երեւում էր դեռ Աբրահամի ժամանակվա Քանանում: Ուիլիամ Լեյն Քրեյգն ասում է, որ բռնություններն ու պատերազմները մերձավորարեւելյան ազգերի համար կենսաձեւ էին, իսկ մարդկային զոհաբերությունները՝ ծիսական անհրաժեշտություն[9]: Հետեւաբար պետք է ընդգծենք. քանի որ ժամանակի մթնոլորտն այլ էր, ապա Աստծո թեոդիցեան եւս պետք է դիտել տվյալ ժամանակի պրիզմայով: Սա է հիմնական դժվարությունը, որ աստվածաբանների առջեւ ծառանում է մեր միջավայրից տարբեր պայմանների մասին խոսելիս, հակառակ դեպքում կարելի է հասնել թեոդիցեայի մերժման ու ենթադրություններ անել այն մասին, որ Հին Կդրակարանի Աստվածն այն Աստվածը չէ, որին մարդկությանը հայտնեց Քրիստոս՝ դրանով հանգելով մարկիոնականության:

Ի վերջո պատմությունից հայտնի է, որ քանանացիները գլխովին չոչնչացվեցին: Քանանացիների ցեղասպանության հանգամանքներն ուսումնասիրող Paul Copan-ը հետեւյալն է գրում. «Բ. Օր. Է. 2-5 համարներից կարելի է ենթադրել, որ չնայած Աստված հրամայեց պատժել քանանացիներին, բայց նրանք չպիտի ոչնչանային, քանի որ Աստված նաեւ պատվիրում է նրանց հետ քաղաքական դաշինքներ չկնքել ու չամուսնա-

8 **W. Morriston,** *Did God Command Genocide (A Challenge to the Biblical Inerrantist),* http://www.colorado.edu/philosophy/wes/DidGodCommandGenocide.pdf:

9 Տե՛ս **W. Lane Craig,** *Slaughter of the Canaanites,* http://www.reasonablefaith.org/the-slaughter-of-the-canaanites-re-visited:

նալ նրանց հետ: Այս հարվածից մենք նաեւ տեղեկանում ենք, որ քանանացիների կրոնը արմատախիլ անելն ավելի կարեւոր էր, քան հենց քանանացիների ոչնչացումը: Հեսուի գրքի մեջ տեղ գտած «ոչնչացման նկարագրությունների լեզուն» ակնհայտորեն չափազանցված է: Մենք տեսնում ենք, թե ինչպես հենց նույն Հեսուի գիրքը ի վերջո խոստովանում է, որ քանանացիները դեռ ապրում են այնտեղ»[10]:

Թեոդիցեայի մյուս խնդիրը անմեղ կանանց ու երեխաների սպանությունն է: Copan-ը նշում է, որ դեռ Աբրահամին Աստված խոստացել էր չոչնչացնել Սոդոմը, պահպանել քաղաքը, եթե այնտեղ լինեին փասը անմեղ մարդիկ: Նույնը պետք է ասել Քանանի յոթ քաղաքների մասին: Copan-ը համոզված է, որ նրանց կանայք ամենեւին էլ անմեղ չէին (Թվոց ԻԵ.): «...Իսկ ինչ ասենք երեխաների մասին: Մահը կլիներ նրանց ողորմությունը: Նրանք կանցնեին Աստծու ներկայության մեջ եւ փրկված կլինեին անբարո մշակույթի պարտադիր ազդեցությունից... Ավելին, նորածիններն ու երեխաները, որոնք սպանվեցին իսրայելցիների կողմից, անդենական կյանքում կճանաչեին Աստծու արդարացի պատճառները, նրանք Աստծու հետ միաձայն կլինեին...»[11]: Սակայն այս կետը բացատրելու եւ առհասարակ մնացած սպանությունների խորքային նպատակը հասկանալու համար օգնության է գալիս եբրայերեն եզրաբանության մեջ հաճախ կիրառվող մի բառ: Պատերազմի հանդեպ հինկտակարանյան լեզուն կիրառում է ḥerem (חרם) բառը: Հին Կտակարանում այն հանդիպում է բազմիցս՝ թե՛ գոյականի, թե՛ բայի տեսքով եւ ունի տարբեր թարգմանություններ՝ «դնել արգելքի տակ» «նվիրաբերել ոչնչացնելուն», մի բառ, որ կոչ է անում ամբողջովին ոչնչացնել թշնամուն: Այս բառը, ինչպես եւ եբրայերենի շատ այլ բառեր, չի սահմանափակվում մեկ իմաստով, եւ առավել մանրամասն ուսումնասիրելուց հետո լեզվաբանները վերականգնել են համենայն դեպս 3 իմաստային խումբ.

1. որեւէ մեկին կամ ինչ-որ բան սրբացնելու համար՝ որպես հավիտենական եւ վերջնական ընծա (զոհ)
2. պատերազմում՝ քաղաքը եւ նրա բնակիչների ոչնչացումը սրբացնելու համար
3. պարզապես պատերազմի ընթացքում կոտորածներ կատարելու համար

Ḥerem-ի խնդիրը մանրամասն քննության է առել Գերհարդ ֆոն Ռադը՝ գալով այն մտքին, որ Յահվեի պատերազմը սրբազան բնույթ է կրում: Նա թվարկում է 13 կետ, որոնք ցույց են տալիս, թե Քանանի պատերազմի ողջ ընթացքը սրբազան արարողակարգի նման ամենայն մանրամասնությամբ պատրաստվել էր, ու Իսրայելն էլ այն կատարեց: Նշենք մի քանի կետ, որոնք բերում է Գ. ֆոն Ռադը. փող հնչեցվեց՝ ի նշանավորումն պատերազմի, զորքը կոչվում էր «Յահվեի ազգ», պատերազմի մասնակիցներն օծվեցին, կար Յահվեին մատուցվող զոհը, Աստված զորքի առջեւից էր գնում, թշնամին վախենում էր Յահվեից, մարտի ընթացքում Յահվեն միջամտում էր...[12]:

---

10 Անդ:

11 **P. Copan,** *Is Yahweh a Moral Monster? The New Atheists and Old Testament Ethics, Philosophia Christi*, vol 10, 2008), http://www.thedivineconspiracy.org/Z5230Z.pdf:

12 Տե՛ս **Gerhard von Rad,** *Holy War in Ancient Israel, ed. and trans. Marva J. Dawn (Grand Rapids: Eerdmans, 1991)*, էջ 41-51. **A. Woods,** Canaanite Genocide, http://www.spiritandtruth. org/teaching/documents/ articles/27/27. pdf:

Ḥerem բառի արմատը «առանձնանալ»-ն է: Ուրեմն Քանանի ազգերը առանձնացված էին Աստծո համար՝ որպես ընծայաբերում, զոհ, իսկ զոհ մատուցողը Իսրայելն էր: Մինչեւ Քանան մտնելը Աստված հրեաներին ամենայն մանրամասնությամբ սովորեցնում էր զոհ մատուցելու ձեւը: Եւ Եգիպտոսից դուրս գալու նպատակը զոհ մատուցելն էր (հմմտ. Ելք Գ. 18): Բայց ինչ զոհի մասին էր խոսքը: Եթե զոհը Քանանն էր, ապա այն շատ անհաջող զոհաբերվեց, քանի որ Իսրայելը դեռ կայացած քահանա չէր, Քանանն էլ ամբողջությամբ անմեղ չէր. Քանանի զոհը այնքանով էր ընծա, որքանով անմեղները զոհ գնացին: Եթե չլինեին անմեղ զոհեր, այդ ժամանակ խնդիր կառաջանար, որովհետեւ Քանանի կոտորածը ḥerem չէր լինելու՝ այն, ինչը պահանջում էր Աստված: Նպատակը Քրիստոսի Զոհաբերումն էր, որին Իսրայելը աստիճանաբար պետք է նախապատրաստվեր: Այդ Զոհի նախապատրաստական քայլերից էր Քանանի զոհաբերումը, որը մի կողմից փրկություն էր այդ ազգերի համար, քանի որ Աստծուն մատուցվող ընծա էր: Իսկ մյուս կողմից Քանանի զոհը կամայական կոտորած չէր. Իսրայելի պատերազմը նաեւ երկրպագություն էր: Մարտը պետք է հասկացվեր ոչ միայն ֆիզիկական, այլեւ տիեզերական մակարդակում: Իսրայելի զինվորները քահանայի պես օծվեցին, պետք է պահպանեին սեռական մաքրության օրենքները, երկրորդ սերնդի արական սեռի ներկայացուցիչները զանգվածաբար թլփատվեցին (Հեսու Ե. 2-9) եւ ամենակարեւորը՝ մինչեւ Քանան մտնելը հրեաները Զատիկը կատարեցին (Հեսու Ե. 10-12): Այս ընթացքում Աստծու ներկայության Ուխտի տապանակը պետք է պատերազմում լիներ: Էնդի Վուդսը այս առնչությամբ գրում է. «Պատերազմը երկրպագության հետ հավասարեցնելը կարելի է տեսնել հենց մարտերում: Կատարվեց հանդիսավոր երթ (Թվոց Բ.)՝ երգերով, աղոթքներով եւ տոնախմբություններով (Բ. Մնաց. Ի. 18-22): ...Ճակատամարտից հետո եւս երկրպագություն է կատարվում, զորքը սրբարան է վերադառնում Տապանակի հետ (Սաղմ. ԻԴ.), երգեր են երգվում (Ելք ԺԵ. 1-4, Դատ. ԺԱ. 34): Վերջին եւ ամենակարեւոր գործողությունը ḥerem-ն էր՝ նվաճված ազգերն ու նրանց ունեցվածքը Աստծուն նվիրաբերելը: Ḥerem-ին ընդդիմանալը կամ նրա որեւէ կետ զանց առնելը կնշանակեր պարտություն, մինչդեռ կատարելը՝ հաջողություն»[13]:

Այսինքն, Քանանի կոտորածը Աստծուն ուղղված նվիրաբերում էր եւ ոչ թե պարզապես զանգվածային սպանություն: Աստված հաճույքով չէր անում մեղավորների կոտորածները (Եզեկ. ԺԸ. 23, ԼԳ. 11): Այո՛, Քանանը մեղավոր էր Տիրոջ առջեւ, բայց նրանց բռնի մահը եւս պարզապես մահ չէր, այլ ընծա էր, եւ հետեւաբար՝ փրկություն: Ճիշտ չէ Ու. Մորրիսոնի այն պնդումը, թե Հին Կտակարանի ոչ մի հատվածում չենք գտնում որեւէ հիշատակություն այն մասին, որ Աստված ցանկանար դարձի բերել մոլորյալ Քանանը: Աստված Սոդոմի ու Գոմորի՝ Քանանի տարածքում գտնվող քաղաքների օրինակով ցանկացավ խրատել քանանացիներին, ու մինչ 430 տարի հրեաները Եգիպտոսում էին՝ ապաշխարության ժամանակ տվեց նրանց, այլապես ինչո՞ւ միանգամից Աբրահամի սերունդը չբնակվեց այն երկրում, որ Աստված խոստացել էր տալ Աբրահամին: Պետք է հիշել, որ դեռեւս Աբրահամի ժամանակներում, Քանանում՝ Սաղեմում (Երուսաղեմ),

13 **A. Woods,** *Canaanite Genocide* , http://www.spiritandtruth.org/teaching/documents/-articles/27/27.pdf :

ապրում էր Մելքիսեդեկը, որը «բարձրյալ Աստծու քահանան էր» (Ծնող. ԺԴ. 18): Չնայած այս անձնավորության վերաբերյալ բացի հինկտակարանյան սեղմ նկարագրությունից ոչինչ հայտնի չէ, այնուամենայնիվ, եթե խոսքը Բարձրյալ Աստծու քահանա լինելու մասին է, ուրեմն կարող ենք եզրակացնել, որ կար Բարձրյալ Աստծու պաշտամունք: Մելքիսեդեկը միանշանակորեն հեթանոս պաշտամունքի քուրմ չէր, հակառակ դեպքում Աբրահամը նրան տասանորդ չէր վճարի: Ի վերջո, բարեպաշտ Մելքիսեդեկը ոչ միայն քահանա էր, այլեւ՝ սոդոմացիների արքան, որին հավանաբար չէր հաջողվել դարձի բերել իր քաղաքի բնակիչներին: Ուստի Քանանի ցեղասպանությունը, ինչպես եւ պատմությանը հայտնի մնացած ցեղասպանությունները, սակրալ-միստիկ կարգից զուրկ չեն: Ցեղասպանություններն աստվածաբանական արժեւորման ենթակելիս պետք է ի նկատի ունենալ այս խիստ կարեւոր խնդիրը:

Զոհաբերությունը պարադոքս է բազում առումներով: Չէ՞ որ Քրիստոս մեռավ որպես պատարագված անմեղ Գառ՝ հանուն այն մեղքերի, որոնք Ինքը չէր գործել: Նույնն էլ պետք է ասենք Քանանի բոլոր անմեղների մահվան մասին, որոնք մեռան իրենց հայրերի մեղքերի դիմաց. այս կերպ պետք է հասկանալ Ելք Ի. 5-ը: Հայրերի մեղքերի համար սերունդներին պատժելն իրական է մինչեւ Քրիստոսի գալուստը. Նոր Ուխտը Քրիստոսով լուծեց որդիների պատասխանատվությունը հայրերի մեղքերի համար: Զոհաբերությունը Քրիստոսից հետո ստացավ այլ անուն՝ «մարտիրոսություն»: Բոլոր զոհաբերությունների կիզակետը Քրիստոսի Զոհաբերությունն էր, որը կատարվեց մեկ անգամ եւ ընդմիշտ:

Հետաքրքիր է, որ Աստված եւ Քանանի, եւ ողջ մարդկության մեղքերի դիմաց քավության զոհաբերությունը կատարում է Իսրայելի միջոցով, նրա ձեռքերով: Միգուցե Քանանի զոհաբերությունը պատրաստություն էր Իսրայելի համար՝ ապագայում կատարելու մի շատ կարեւոր զոհաբերություն, որը հենց Եգիպտոսից դուրս գալու նպատակն էր: Եթե մովաբացիների արքայի մոգական արարքը՝ զահաժառանգ որդուն զոհաբերելը, փոփոխեց դեպքերի ընթացքը, ապա Քրիստոս եւ Որդի էր, եւ Զահաժառանգ: Նրա Զոհը փոխեց մարդկության պատմության ընթացքը, փոփոխություն առաջացրեց մետաֆիզիկական մակարդակում:

Կապը ցեղասպանության ու զոհաբերության միջեւ զգացվում է նույնիսկ անվանումների մեջ. Քանանի դեպքում ḥerem-ն էր, հրեաների ցեղասպանության դեպքում՝ «հոլոքոստ» բառը՝ որպես հինկտակարանյան ողջակիզման զոհի հունարեն անվանում: Արդյոք պատահական են ընտրված այս անունները, արդյո՞ք Քանանի ḥerem-ը՝ որպես առանձնացված ընծա, պատահական անվանում է, արդյո՞ք «հոլոքոստ» բառը պարզապես հարմարեցվել է հրեաների կողմից՝ իրենց ցեղասպանությանը սակրալ բնույթ հաղորդելու նպատակով: Չենք կարծում, թե խնդիրը այդքան մակերեսային լինի, քանի որ ոչ միայն այդ երկու ցեղասպանությունների դեպքում է խոսվում խորհրդական զոհաբերության մասին, այլեւ՝ Հայոց ցեղասպանության եւ Ի. դարավերջի ցեղասպանությունների դեպքում:

Զոհաբերությունների գործածումը ցեղասպանության կողքին հասկանալու համար

պետք է ընկալել հինկտակարանյան զոհաբերությունների իմաստն ու խորհուրդը: Ղեւտացվոց գրքում (Ա.-Ը.) մանրամասնորեն նկարագրվում են բոլոր այն զոհաբերությունները, որ հրեաները պետք է կատարեին՝ մեղքերի թողության արժանանալու համար:

«Ընծա» բառին Հին Կտակարանում համապատասխանում են եւս մի քանի եզրեր՝ բացի ḥerem-ից: Իսկ ինչո՞ւ է «ընծա» իմաստն ընկած զոհաբերության հիմքում. այն պարզ պատճառով, որ խորհուրդի մեջ առկա է Աստծուն նվեր մատուցելու գաղափարը: Եբրայերեն ամենահաճախ օգտագործվող եզրը, որը մատնացույց է անում «զոհ»-ին, «կորբան»-ն է (եբր. קרבן): Զոհը կոչվում է կորբան այն պատճառով, որ նպաստում է զոհաբերությունը մատուցողի եւ Աստծու մերձեցմանը: Եւս երկու տեսակի զոհաբերությունների՝ «հացի զոհի» («մինխա» - מנחה) եւ «խաղաղության զոհի» («զեվախ շելամիմ» - זבח שלמים) հիմքում նախնական իմաստով ընկած է «ընծա», «նվեր» բառը:

Զոհերի իմաստն այն էր, որ ընծան՝ թե՛ կենդանական, թե՛ բուսական ծագման զոհը, վերածվում էր Աստծուն մատուցվող սրբազան ընծայի: Այս կարգի զոհերը փոխարինելու եկան քահանացիների մեջ լայն տարածում ունեցող մարդկային զոհաբերություններին: Արդեն խոսվեց այն մասին, որ զոհի արյան հեղումը, ըստ հնից եկող հավատալիքների, ի զորու էր փոփոխելու ամենաանելանելի իրավիճակը, մեղմելու, բարելավելու վիճակը:

«Հոլոքոստ»-ը հունարեն թարգմանությամբ «ողջակիզում» է նշանակում (հունարեն՝ Ὁλοκαύτωμα): Խոսքը վերաբերում է Ղեւտ. Ա. 3-17, Զ. 1-6, 8-13 համարներում նկարագրված զոհաբերության կարգին, երբ զոհաբերվող կենդանին այրվում էր ամբողջությամբ: Անվանումը սրանում է «օլա»՝ עלה եբրայերեն բայից, որը նշանակում է «բարձրանալ», «վերհառնել»: Ղեւտացվոց գրքում չեն նշվում այն հանցանքները, որոնց պատճառով պետք է մատուցվեր այս տեսակի զոհը, սակայն այն պետք է մատուցեին մարդիկ, ովքեր չէին կատարել դիտավորյալ հանցանք, այլ անզգուշորեն էին մեղք գործել: Արու զոհը ամբողջությամբ այրվում էր՝ բացի մորթուց եւ արյունից: «Բարձրանալ»-ը իբրեւ բառահիմք նաեւ մատնանշում է այն, որ այս զոհի բույրը պետք է բարձրանար առ Աստված՝ որպես անուշահոտություն (Ղեւտ. Ա. 17): Կարեւոր պայման էր, որ զոհաբերողը ձեռքը դներ կենդանու վրա՝ որպես խորհրդանիշ այն բանի, որ իր մեղքերը փոխանցում է կենդանուն:

«Հոլոքոստ» եզրը կիրառելով հրեական ցեղասպանության համար՝ ի նկատի են առնվել այն բոլոր մանրամասները, որոնք թվարկվեցին վերեւում: Առաջին հերթին Հոլոքոստն ուսումնասիրող հիմնականում հրեա մասնագետները շեշտում են, որ հրեաներին պատրաստվում էին ամբողջովին կոտորել: Կարելի է նշմարել նաեւ մեղքը. դա ազգային ընտրության, խտրականության նացիստական ուտոպիան էր, որ ձգտում էր վերացնել աստվածաշնչյան ընտրությունը կրող հրեաներին: Ի վերջո, սեփական ընտրյալության հանդեպ հավատը հրեային թույլ է տալիս իր ազգին տեսնել որպես անուշահոտ զոհաբերություն: Չնայած «հոլոքոստ» եզրի «սրբազան զոհ» նշանակությանը՝ հրեաներն իրենք գերադասում են օգտագործել այլ բառ՝ «շոահ», որ նշանակում է «աղետ»: Միակ անհամապատասխանությունը զոհաբերության հետ այն է, որ ողջակիզման զոհը մատուցվում էր, երբ հանցանքը կանխամտածված բնույթ չէր կրում, մինչդեռ հրեաներին կոտորելու նացիստական որոշումը մանրակրկիտ մշակված էր ու նախապատրաստված:

Հոլոքոստի աստվածաբանությունը առանձին մտածողների տեսակետների համախումբն է, իսկ այդ տեսակետները տարբեր հեղինակների մշակմամբ հաճախ հակասում են միմյանց: Հրեական ռադիկալ աստվածաբան Ռ. Ռուբինշտայնը (ծն. 1924) իր «Օսվենցիմից հետո» գրքում[14] տեղ գտած գաղափարներով ցնցեց ուղղադավան հուդայականության աստվածաբաններին՝ պնդելով, որ սուրբգրային Աստծո կերպարը ոչնչով չի կարող արդարացվել, եւ այն պետք է հեռանա: Նա գտնում է, որ հրեական պատմության ընթացքում ավանդական Աստվածը, եթե անգամ չի մեռել, ապա վերածվել է ուրիշ Աստծու. Նա, իբր, այն աստվածը չէ այլեւս, որին սովոր է պատկերացնել ավանդական հուդայական աշխարհընկալումը: Ռուբինշտայնին այս պատճառով սկսեցին կոչել «Աստծու մահվան աստվածաբան»: Ռուբինշտայնն ի վերջո հետեւյալ արտահայտությունն է անում. «Ես այլեւս չեմ կարող հավատալ»: Նա անիմաստ է համարում Դասեք տոնելը, քանի որ այդ տոնի հիմքում ընկած է Աստծու հոգածությունը հրեա ժողովրդի հանդեպ, ինչը, ըստ նրա, իսպառ բացակայեց Հոլոքոստի ընթացքում: Փոխարենը գիտակցելով իր հայտարարությունների վտանգավոր լինելը՝ նա զիջում է կատարում մի կետում, երբ ասում է, որ Աստված ավելի շուտ «Սուրբ Չգոյ» է, որն ամենեւին նոր եզր չէ հուդայականության մեջ: Պետք է, սակայն, ընդգծել, որ հեղինակը ավելի ուշ շրջանի իր մտակառուցումներում ավելի լավատեսորեն է տրամադրված. նրա բնափոխված գաղափարները զերծ են չգոյի ծայրահեղությունից՝ ընդունելով, որ Աստված բարձրագույն իրականություն է: Սակայն Նա դուրս է մարդկության պատմությունից. դրա մասին է վկայում Հոլոքոստը, հետեւաբար մարդու գոյատեւման ընթացքը եւ ապրելու իմաստը հիմնված չեն աստվածայինի վրա, եւ հրեան ինքը պետք է ստեղծի այդ իմաստները:

Ռուբինշտայնի աստվածաբանությանը հակադրվում է Էլիզեր Բերկովիցը (1908-1992): Նա ռադիկալ աստվածաբանությանը պատասխանում է «Հավատքը Հոլոքոստից հետո» (1973 թ.) գրքով[15]: Բերկովիցն ուղղադավան հուդայական աստվածաբան է, եւ չնայած նրա մտքերը հաճախ են քննադատվում՝ ամբաստանելով նրան, որ նա շրջանցում է Ռուբինշտայնի մարտահրավերային հարցադրումները, բայց եւ այնպես՝ Բերկովիցը համոզված է, որ դրանք իրենց պատասխանները գտնելու են ապագայում: Բերկովիցի հետաքրքրության կետերից մեկը Ռուբինշտայնի «անտարբեր Աստծու» գաղափարի հետ է կապված. Բերկովիցը գտնում է, որ եթե խոսենք, թե գոյություն ունի Տիեզերական էթիկական անտարբերություն, ապա օրինաչափորեն պետք է եզրակացնենք նաեւ, որ գոյն ընդհանրապես իմաստ չունի, այն աբսուրդ է: Բերկովիցը սուրբգրային բնագրում գտնում է բացատրություններ: Բերկովիցի աստվածաբանությունը կարելի է կոչել պատմամասսասիրական, քանի որ նա փորձում է ուրվագծել Աստծո միջամտությունը մարդկության պատմության մեջ: Բերկովիցը քննարկում է Եսայի ԽԵ. 15-ը, որտեղ խոսվում է այն մասին, որ Աստված կարող է թաքնվել ու թաքնվում է, որպեսզի մարդուն ազատ ընտրության, բարոյական զարգացման հնարավորություն տա: Նման թեոդի-

14 Տե՛ս անդ, էջ 340-342:

15 Տե՛ս **E. Berkovits,** *Faith after the Holocaust, KTAV Pub.* House, 1973. Հեղինակի մտքերը ներկայացնելիս օգտվել ենք http://www.jewishvirtuallibrary.org/jsource/judaica/ejud_0002_0003_0_02688.html, http://relijournal.com/judaism/eliezer-berkovits'-post-holocaust-theology/ կայքերից:

ցեան նորություն չէ, սակայն Բերկովիցի բացատրությունը առանձնահատուկ է. Աստված պետք է երես դարձնի պատմությունից, եթե անգամ մարդուն տրված ազատությունն օգտագործվի ի վնաս մարդկության: Բերկովիցը նաեւ հիշեցնում է որոշ սաղմոսներ, որտեղ խոսվում է Աստծու մասին, որը «ծածկում է Իր երեսը»՝ նույնիսկ առանց պատճառի (հմմտ. Սաղմ. ԽԴ. 24): Աստված ստիպված է ծածկվել, որովհետեւ Նա ազատ կամքով է օժտել Իր ստեղծած մարդուն: Հրեաների կոտորածն ամենեւին հակասեմական պոռթկում չէր, այլ, ինչպես նա է համոզված, նացիստների մետաֆիզիկական վախն էր «իշխանություն չունեցող» Աստծու հանդեպ, որը միաժամանակ ներկա է պատմության ընթացքում: Նացիստները այդպիսով վախենում էին հրեաների պարադոքսալ Աստծուց: Անդրեյ Սպոկոյնին հոլոքոստի փիլիսոփայությանն ու աստվածաբանությանը նվիրված իր հոդվածում հետեւյալ միտքն է արտահայտում. «Թվում է, թե նացիստները ծանոթ էին Միդրաշին. եթե վերացվի վկան, ապա Աստված էլ կմեռնի»[16]: Սակայն քանի որ վկան չվերացվեց, Իսրայելը ողջ մնաց, նշանակում է արդարությունը հաղթանակել է: Սակայն Բերկովիցը շատ զգույշ է. նա կրոնական ուղղվածություն չի ցանկանում տալ Հոլոքոստին. Հոլոքոստի ընթացքում մահացան բոլորը՝ թե՛ հավատացյալ հուդայականները, թե՛ քրիստոնեության դարձածները եւ թե՛ աթեիստները: Դարձ է, որ նրանք չմեռան հանուն հավատի, այլ այն պատճառով, որ իրենց երակներում հրեական արյուն էր հոսում: Բերկովիցի եւ հուդայական աստվածաբանների մեծամասնության համար Հոլոքոստի զոհերը չեն ընդգրկվում «Քիդուշ հա-Շեմ»-ի՝ այն մարդկանց շարքը, որոնք պատրաստ են մահանալ հանուն իրենց կրոնի:

Մեկ այլ հայտնի աստվածաբան՝ Էմիլ Ֆակենհայմը (1916-2003) կարծում է, որ պետք չէ ուշադրություն դարձնել որեւէ ավանդական կամ ոչ ավանդական թեոդիցեայի, այլ պետք է առաջնային համարել հրեայի տված պատասխանը: Պետք չէ Աստծուն խառնել մարդկային վեճերի մեջ: Թորայի 613 պատվիրաններին ավելացվել է եւս մեկը՝ 614-րդը. հրեաներին արգելված է հիասթափվել Աստծուց եւ թույլ տալ, որ հուդայականությունը կործանվի: Բառացիորեն այդ պատվիրանը հետեւյալն է. «Ճշմարիտ հրեային արգելված է Հիտլերին շնորհել հետմահու հաղթանակ»: Այս պատվիրանն ընդգրկում է մահացածների հիշատակը պահելը, որպեսզի նրանց մասին հիշողությունը չկորչի. «Մենք պետք է մեր մեջ պահենք հույսն առ Աստված, նույնիսկ եթե ստիպված ենք լինում մրցակցել Նրա հետ, եւ մենք պետք է պահպանենք հույսը աշխարհում, որքան էլ մարդկանց մոտ ցանկություն առաջանա վերածել այն մի այնպիսի վայրի, որտեղ ամեն ինչ թույլատրված է»[17]: Ի տարբերություն Ռուբինշտայնի՝ Ֆակենհայմը կարծում է, որ Աստված ինչ-որ կերպ ներկա է աշխարհում, եւ մարդիկ պետք է Նրա կամքը կատարեն:

Այսպիսով, հրեաների տառապանքին ու մահվանը հաճախ տրվում է սակրալ նշանակություն: Հոլոքոստի վերապրեության հեղինակները շտապում են այս մտայնության մեջ տեսնել բացասականը, իբր դրանով հրեաները ձգտում են ներգրավվել Աստծու ծրագրի մեջ՝ ավելի մերձենալ խորհրդականին՝ իրենց կոտորածներին տալով միստիկ,

16 Հեղինակի այս եւ մյուս մտքերը ներկայացվում են ըստ՝ **А. Спокойный,** *Введение в теологию Холокоста*, 2001, http://ru.madrichim.org/contents.aspx?id=2698 կայքի:

17 http://ru.madrichim.org/contents.aspx?id=2698:

զոհաբերական նշանակություն: Միգուցե այս կարգի հայտարարությունները ունեն ճշմարտության հատիկ, սակայն արյան հեղումը, ողջակիզումը, զանգվածային սպանություններն արդեն ապրվածաբանական տեսանկյունից ունեն միստերիայի իմաստ:

Հոլոքոստը որպես զոհաբերություն չի ընկալում ռուս ուղղափառ ապրվածաբան Անդրեյ Կուրաևը՝ նշելով, որ իր համար պարզ չէ, թե ում էր ուղղված այդ զոհաբերությունը՝ Աստծո՞ւն, թե՞ սատանային, քանի որ զոհաբերող-նացիստները ծայրահեղ անմաքուր էին եւ սպանելիս միանշանակ չէին մտածում Աստծու մասին: «Տարօրինակ է, որ նացիստական աղտեղությունները, որոնք չունեին ոչ մի ապրվածաշնչային-քրիստոնեական հիմք, եւ հեստապնդումները, որ տարածվեցին նաեւ քրիստոնյա հրեաների վրա, կոչվեցին զուտ կրոնական տերմինով: Եթե նացիզմի տարիներին եւրոպական հրեականության աղետը ողջակիզման զոհ է, ապա ո՞վ է զոհաբերողը եւ ո՞ր աստծուն է մատուցվել այդ զոհը: Աստվածաշնչում ողջակիզման զոհը մատուցվում էր Աստծուն իրենց իսկ՝ հրեաների կողմից: Բայց Երրորդ Ռեյխում զոհը հենց հրեաներն էին, որ նացիստները զոհաբերում էին իրենց արյունալի ուտոպիաներին: Սա նշանակում է, որ այդ զոհը ծայրահեղ անմաքուր է. Հոլոքոստի զոհերը դառնում են կուռքերին մատուցված զոհեր: Դժվար թե այսպիսի հեստեությունը դուր գա հրեաներին, բայց չէ՞ որ այն գրամաբանորեն բխում է իրենց ընտրած եզրի բացատրությունից»[18]: Ա. Կուրաեւի այս մտքերը չեն բխում անմիջականորեն զոհի ու զոհաբերման խորհուրդի ունիվերսալ իմաստից, քանի որ ապրվածաբանության մեջ զոհաբերման վերաբերյալ միանշանակ բացատրություն չկա: Քրիստոսի զոհաբերման խորհուրդը բացատրելիս եկեղեցական հայրերը երկմտում են այն հարցի շուրջ, թե ում էր իրականում մատուցվում Քրիստոսի զոհը՝ Աստծո՞ւն, սատանային, թե՞ արդարության գաղափարին:

Բացի Հոլոքոստից ու Ռուանդայի ցեղասպանությունից՝ սակրալի առկայությունը անիսուսափելի է Հայոց ցեղասպանության պարագայում: Զոհաբերման մետաֆիզիկական կողմը առավել եւս ակնառու է Մեծ Եղեռնի դեպքում: Ուսումնասիրողների մեծամասնությունը դժվարանում է Հայոց ցեղասպանությունը դիտարկել որպես կրոնական հողի վրա առաջացած բախում: Միանշանակ սխալ է Հայոց ցեղասպանությունը դիտել որպես իսլամադավանների ու քրիստոնյաների հակամարտության հետեւանք: Սակայն կասկած չի կարող լինել, որ հայերի քրիստոնյա լինելը խաղաց որոշիչ, ճակատագրական դեր ցեղասպանությունն իրագործելու համար: Թուրք կրոնական գործիչները հայերի նկատմամբ հրահրում էին սպանդ՝ կրոնական հողի հիմքի վրա, հայտարարվում էր «սրբազան պատերազմ»՝ ընդդեմ «անհավատ» հայերի. «քանի կենդանի է գոնե մեկ հայ, կիսալուսինը չի իմանալու, թե ինչ է հաղթանակը»[19]: Սակայն այսպիսի հայտարարությունները չէր կիսում ողջ իսլամական աշխարհը, շատերն էին կոտորածը համարում իսլամական բարոյական համակարգի հետ անհամատեղելի երեւույթ:

Հայոց ցեղասպանության իրագործման կրոնական դրդապատճառները այլ ուղղվածություն ունեին, գոյություն ուներ այլ խնդիր՝ իր բնույթով մետաֆիզիկական, միստի-

18 **А. Кураев,** *Как делают антисемитом*, http://bookz.ru/authors/kuraev-andrei/kak-dela_720/1-kak-dela_720.html:

19 **Дж. Гуайта**, *Крик с Арарата*, М., 2005, . 55.

կական. օրինակ, հրեաների ցեղասպանության դեպքում կապը զոհաբերության խորհրդի հետ երևում է նույնիսկ առաջին իսկ հայացքից, այն է՝ անվանումից: Յուրաքանչյուր պատմական իրադարձության ետևում թաքնված վերպատմական պատճառները տեսնելը մեր կարծիքով հակագիտական չէ: Հայոց ցեղասպանության հետ աստվածաշնչային հիմք ունեցող երևույթների կապը վեր հանելը առավել ևս աստվածաբանական գիտության ուսումնասիրության ոլորտներից է:

Անցյալում անդրադառնալով հայերին «Ամաղեկ» կոչելու պատճառների բացահայտմանը, եկել ենք այն եզրահանգմանը, որ Հայոց ցեղասպանությունը «վերջին ամաղեկացուն ոչնչացնելու» ծրագիր էր[20]: Հանրահայտ փաստ է, որ Թուրքիան մասնավորապես Ի. դ. առաջին տասնամյակներին գտնվում էր «ազատ որմնադիրների» օթյակներից մեկի՝ «Մակեդոնիայի ազատագրման օթյակ»-ի անդամների ձեռքում, իսկ վերջիններս հայտնի միստիկական եւ քաղաքական ուսմունքների գաղափարակիրներն էին: Ավելին՝ որոշ ուսումնասիրողներ (Ջեֆֆրի Ստայնբերգ, Ալեն Դուգլաս, Ռեյչել Դուգլաս) գտնում են, որ Հայոց ցեղասպանության արմատները հենց նշված գաղափարախոսության իրականացման արդյունք էին:

Մի կողմ թողնելով ցեղասպանության իրագործողների ինքնությունը, կրոնա-միստիկական հայացքները, որոնք պետք է որ լինեին այն ակունքը, որից սնվում էր Ցեղասպանությունն իրականացնելու ծրագիրը, դիտարկենք այն մի քանի կետերը, որոնք ինքնին հանգեցնում են ցեղասպանության սակրալ բնույթի ըմբռնմանը: Մեր դիտարկումների արդյունքում զոհաբերության, մասնավորապես աստվածաշնչային զոհաբերություններից մեկի հետ Մեծ Եղեռնի կապը խիստ ակնառու է: Խոսքը նոխազի զոհաբերության մասին է:

Ղեւտացվոց գրքի ԺԶ. գլխում նկարագրված է զոհաբերության մի տեսակ, որը տարբեր է մեղքերի քավության համար կատարվող մնացած զոհաբերություններից: Համաձայն այդ զոհաբերության կարգի՝ Ահարոնը կամ հետագայում տարվա քահանայապետը, պետք է ժողովրդից վերցներ երկու արու այծեր՝ որպես «մեղքի զոհաբերություն»: Քահանայապետը պետք է երկու նոխազների համար վիճակ գցեր՝ մի վիճակը՝ Տիրոջը զոհաբերվելիք նոխազի համար, իսկ մյուսը՝ ազատ պետք է արձակվեր. «Ահարոնը թող իրեն մոտեցնի այն նոխազը, որի վրա արձակվելու վիճակ էր ընկել, թող այն կենդանի կանգնեցնի Տիրոջ առաջ եւ այն արձակելով ու բաց թողնելով դեպի անապատ՝ նրան քավություն թող անի: Եւ թող նոխազն իր վրա վերցնի անօրենությունները» (Ղեւտ. ԺԶ. 9-10): Նոխազի վրա ձեռքերը դնելով Ահարոնը պետք է խոստովաներ Իսրայելի որդիների գործած բոլոր մեղքերը՝ դրանք թափելով կենդանի նոխազի գլխին, դրանից հետո «հարմար մի մարդու միջոցով» (Ղեւտ. ԺԶ. 21) նոխազը պետք է տարվեր ու ազատ արձակվեր դեպի անապատ: Եբրայերենով այս նոխազը կոչվում էր לעזאזל («լ՚ազ-ազել»)[21]:

20 Տե՛ս «Ժամանակակից մարտահրավերներ» (Միջբուհական երիտասարդական գիտաժողովի նյութեր), Աճեմյան մատենաշար ԺԲ., Երեւան, 2010, էջ 181-189:

21 Բառի բացատրությունը՝ իր ամենատարբեր մեկնաբանություններով տե՛ս **И. Р. Тантлевский,** նշվ. աշխ., էջ 342: Միայն հակիրճ նշենք, որ այդ բացատրությունը ամենեին չէր նշանակում Ազազելին՝ սատանային

Պետք է ուշադրություն դարձնել, սակայն, որ այսպիսի զոհաբերությունը նաեւ կատարվում էր զվարակի զոհաբերության ու մեկ այլ այծի զոհաբերության հետ միասին. դրանք զոհաբերվում էին Տաճարում, ընդ որում դրանց արյունը քահանայապետը ցողում էր Սրբություն Սրբոցում: Այսինքն, զոհաբերությունների այս շարքն իր բնույթով միեւնույն օրվա ընթացքում կատարվող մեկ զոհաբերության արարողություն էր: «Քավության նոխազի» եւ հայերի զոհաբերության միջեւ կապը, մեր կարծիքով, միանգամայն նկատելի է դառնում նկարագրվածից հետո: Նախ, հայերը եւս «բնակավայրից դուրս» հանվեցին ու տարվեցին կոտորվելու, զոհաբերվելու համար: Երկրորդ, հայերը պարզապես չկտրվեցին իրենց հայրենիքից, այլ հոծ բազմություններով տարվեցին անապատ, ճիշտ ինչպես «քավության նոխազ»: Իսկ ո՞րը կարող էր լինել այն մեղքը, որը դրվեց հայերի վրա՝ իբրեւ քավություն. միանգամից հիշվում է Արմին Վեգների հայտնի արտահայտությունը. «Հայ ժողովուրդը այս պատերազմի զոհն է»[22]: Կարծում ենք, որ Վեգները նկատի է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմը, որի մեղքն ընկավ անմեղի վրա, որը որեւէ կապ չուներ այդ պատերազմի հետ:

Հայոց կոտորածը տարբեր հեղինակների կողմից բազմիցս կոչվել է «զոհաբերություն»: Հաճախ սա ցանկացած աղետի ու մարդկային բռնի մահվանն առհասարակ մեխանիկորեն տրվող բնորոշում է: Սակայն, երբ «զոհ» եւ «զոհաբերություն» բառերը ներսից ենք դիտում, ուշադրություն ենք դարձնում նաեւ այն ոլորտին, որին պատկանում են այս բառերը, այն է՝ ասպվածաբանական-կրոնական ոլորտը, բազում հարցեր իրենց բացատրություններն են գտնում: Այլապես մինչեւ վերջ անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ է անմեղի մահը «զոհաբերություն» կոչվում անգամ աշխարհիկ ԻԱ. դարում:

Փաստորեն ցանկացած սպանություն զոհաբերություն է. դա է վկայում առաջին սպանության պատմությունը, որտեղ առկա է կապը զոհաբերելու կարգի հետ: Պատահական չէ Կայենի կատարած եղբայրասպանության առնչությունը «զոհ մատուցելու» Աստծու պահանջի հետ: Ավելին՝ Աբելը քանիցս «զոհ», «վկա» է կոչվում Նոր Կտակարանում[23], որի զոհը նախօրինակն էր Քրիստոսի զոհաբերության:

Հայոց ցեղասպանությանը հաճախ է տրվել «զոհաբերություն» անունը. «Ոչ մի անգամ որեւէ ազատագրական շարժում չի համեմատվել զոհաբերման՝ ավելի մեծ դաժանությամբ, քան հայերինը»[24], - ասել է Ա. Վ. Ամֆիտեատրովը: Իսկ Ուինսթոն Չերչիլը «հոլոքոստ» է կոչում հայերի Եղեռնը[25]:

Հայոց մեջ սեփական զոհը միանշանակ ընկալվել է որպես խորհուրդ. «...գաղափարն ու արդարությունը, որուն համար կը զոհաբերուի թիւրքահայը՝ ասպուածային են, իսկ ասպուածայինը երբեք չի մեռնիր»[26]: Գեւորգ Ե. Սուրենյանց Կաթողիկոսը Զատկի տոնին իր հայրապետական շնորհավորանքի մեջ նկատում է ա՛յն, հանուն ինչի զոհաբեր-

մատուցվող զոհ, քանի որ նաեւ Վին կտակարանում ոչ մի տեղ չի նշվում, իբր այն մատուցվում էր սատանային:

22 **Ա. Վեգներ**, Խղճիս ձայնը երբեք չի լռելու, Երեւան, 2006, էջ 187:

23 Տե՛ս Երբ. ԺԲ. 24, Յայտն. Զ. 9:

24 Մեջբերումն ըստ **О. Г. Инджикян**, *Социальная психология геноцида*, М., 1995, էջ 73:

25 Տե՛ս **Winston Churchill**, *The Aftermath*, London, 1929, էջ 158:

26 «Ս. Էջմիածինը եւ Հայոց ցեղասպանությունը» («Արարատ»-ի ժառանգություն), հրատ. պատրաստեց **Ա. Հարությունյանը**, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2010, էջ 247:

վում է հայը. «Երկրորդ Ջատիկն է, որ կը փօխէ քրիստոնեայ աշխարհը Աւետարանի բանին հակառակ, արիւնի եւ աւերի շնչով, Փրկչի յարութիւնն է, եւ կը փօխէ Հայաստանեայց Եկեղեցին բիւրավոր զոհերով յանուն քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան ազգերու այն գօրեմարտին մէջ»[27]:

Արմին Վեգները կրկին դիպուկ դիտարկում է անում՝ ասելով, որ հայը մահացավ աշխարհին հայտնի ամեն տեսակի երկրային մահերով, բոլոր ժամանակների մահերով[28]: Դ. Լլոյդ Ջորջը առավել գեղարվեստական նկարագրություն է տալիս հայերի ցեղասպանությանը՝ աշխարհակալության համար պայքարող տերություններին կոչելով հայերին զոհողներ. «Հայաստանը զոհ մատուցվեց մեր կողմից կանգնեցված հաղթական խորանի վրա»[29]:

Զոհաբերություն կոչելը պատահական չէ, եթե անգամ խոսք չկա բուն զոհաբերության մասին. ենթագիտակցորեն զոհաբերության իմաստը հաշվի է առնվում: Սակայն պետք չէ բացարձակացնել սեփական զոհաբերությունը, այլ պետք է հիշել, թե հանուն ինչի քրիստոնյա ազգը ենթարկվեց տառապանքի:

Ցեղասպանությունը աղետ է, որը դժվարըմբռնելի է, դժվարվերլուծելի կամ մեկնաբանելի, բայց միաժամանակ այն Ի.-ԻԱ. դդ. ամենաքննարկվող ֆենոմենների շարքին է: Ցեղասպանություն երեւույթը, որպես մարդկության դեմ իրագործվող հանցանք, իր շուրջն է հրավիրում ամենատարբեր մասնագետների՝ ուսումնասիրելու այն տվյալ բնագավառի շրջանակներում: Քանի որ ցեղասպանությունը վերաբերում է մարդաբանական ամենաբազմազան խնդիրների, ապա յուրաքանչյուր ուսումնասիրություն հույժ կարեւոր արժեք է ստանում, հատկապես այն դեպքում, եթե ցեղասպանությունն ուսումնասիրելու մեջ նկատվում է մարդկության դեմ գործած այս ամենասարսափելի հանցանքի կանխումը՝ որպես հեռահար նպատակ: Աստվածաբանության ասպարեզում կատարված հետազոտությունները այս առումով եւս բացառություն չեն:

Կարելի է ասել, որ Հայոց ցեղասպանության աստվածաբանության ասպարեզում այժմ կատարվում են որոշ ուսումնասիրություններ: Բայց քանի որ աստվածաբանությունը մեզանում հետխորհրդային շրջանում համեմատաբար նոր շրջանառվող բանագավառ է, ապա եղած փոքրաքանակ ուսումնասիրությունները կատարվել են Սփյուռքում: Հայոց ցեղասպանությունը դարձավ նոր ապոկալիպտիկ դարաշրջանի փոփոխությունների ազդարար: Հայոց ցեղասպանությունից սկսյալ ցեղասպանությունները դարձել են ավելի հաճախակի, սիստեմատիկ եւ մանրամասն ծրագրված: Սա առաջին պատճառներից է, որն ստիպում է մտածելու Հայոց ցեղասպանության աստվածաբանության մասին:

27 Անդ, էջ 245:

28 Տե՛ս, «Геноцид армян в Османской империи» (сборник документов и материалов), под.ред. М.Г.Нерсесяна, Ереван, 1982, էջ 577:

29 Անդ, էջ 582: